

ԵՐԵՎԱՆԻ ՆԵՐՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 բուլբի կէս տարվանը 6 բուլբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և սոսն օրերէն).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Մի գանգաւոր առիթով.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒՒ-
Մանուկ, Մանուկին վայել է. Նամակ Գու-
թայիսից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒՒ-
ԹԻՒՆ. Անգլիան և Իսլամը. Արտաքին լուրեր.
—ՀՆՈՒԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՄԻ ԳԱՆԳԱՅԻ ԱՌԻԹՈՎ

Մենք անդադար լսում ենք երկու տե-
սակ գանգաւոր մեր երկրի անտեսութեան
վերաբերեալ մի հարցի մասին: Գիւղա-
կան համայնքները գանգաւորում են, որ
նրանց համար բոլորովին անարդար կեր-
պով դժուարեցրած է և նոյն իսկ մի քա-
նի տեղերում բոլորովին արգելված ար-
քունական անտեսութեան օգտվելը: Իսկ
պետական պաշտօնեաների մի ստուար
բազմութիւն գանգաւորում է, որ մեր
երկրի ազգաբնակչութիւնը, անխնայ և
անգութ կերպով կոտորելով անտառները,
պտորաստում է մի շարք խոշորոտներ
մեր երկրի մի քանի մասերի անտեսու-
թեան աջող զարգացման համար:

Իբրև երևոյթ, երկու գանգաւորներն էլ
որոշ հիմունքներ ունեն իրականութեան
մէջ: Ճիշդ է, որ անտառները կոտոր-
վում են անխնայ կերպով. բայց ճիշդ է
և այն, որ գիւղացիների համար ստեղծ-
վել են մեծ դժուարութիւններ անտա-
ռից օգտվելու համար նաև այնպիսի
դէպքերում, երբ անտառի պահպանու-
թեան հարցեր չը կան:

Այն ինչ որ խեղացի կերպով մտածված
է ծրագրված է անտառների պահպանու-
թեան համար, անկասկած, ընդունելի
պէտք է համարվի ազգաբնակչութեան հա-
մար, թէկուզ նա պատճառէ ժամանակա-
ւոր դժուարութիւններ մարդկանց: Բայց
իրական փաստերը ցոյց են տալիս, որ
շատ դէպքերում անտառի անտառի պահ-
պանութեան հոգը չէ լինում դժուարու-
թիւնների առաջ գալուստ, այլ ձևական և
կամ հարկապահանջական նկատույններ:
Օրինակ, իրական փաստերը ցոյց են
տալիս, որ շատ տեղ անտառից օգտվելը
միայն փողի հարց է: Եթէ գիւղացին
պտորաստ է կարգին վճար տալու, նա
կարող է ազատ կերպով օգտվել անտա-
ռից բաւական մեծ չափով: Եւ եթէ դժ-
ուարութիւն կայ՝ դա միայն աղքատ գիւ-
ղացու համար է, որ բաւականչափ փող
չունի փայտի վճարը տալու համար:

Անկասկած՝ այս դէպքում անտառի
պահպանութեան անհրաժեշտութիւնը չէ
արգելի կանգնած գիւղացու առաջ, այլ
այն չափազանց մեծ վճարը, որ սահման-
ված է անտառից օգտվելու համար: Եւ
ուրեմի պետութիւնը կարող է դիւրու-
թիւններ տալ գիւղացիներին առանց վը-
նաս հասցնելու երկրի անտեսութեանը:

Անյարմարութիւններից մէկն էլ ներ-
կայումս ընդունված ձևականութիւն-
ներն են և փայտ գողանալու արձանա-
գրութիւններ կազմելու եղանակը: Ան-
տառապահներին այնպիսի բացառիկ և
ընդարձակ իրաւունքներ են տրված ար-
ձանագրութիւններ կազմելու համար, որ
ազգաբնակչութիւնը իրան գերի է գրում
նրանց ձեռքին: Անտառապահի յայտարա-
րութիւնը և խօսքը համարվում է անվի-
ճելի պաշտօնական տեսակէտից: Եթէ
ներքայի մի քանի երկիրներում կայ
նոյնատեսակ օրէնք, պէտք է չը մոռա-
նալ, որ այնտեղ անտառապահների կազ-
մը աւելի բաւարար է քան մեզանում,
որ այնտեղի անտառապահը աւելի պար-
տաճանաչ և որոշ սկզբունքներ ձանաչող
մարդ է, իսկ մեզանում յաճախ անտա-
ռապահ վերցվում է բոլորովին ուրիշ
հակումների և յատկութիւնների անձնա-
ւորութիւն:

Գիւղական համայնքները փորձով հա-
մողվել են, որ անտառապահները ի գու-
շեն գործ ղնում իրանց իրաւունքները և
արձանագրութիւններ կազմելու ժամա-
նակ ղեկավարվում են ոչ պարտաճանա-
չութեան թերազդութիւններով, այլ սե-
փական, եսական դրդումներով:

Այդ է պատճառը, որ գիւղական գան-
գաւորները անտառապահների վերաբերու-
թեամբ դարձել են այնքան սուր և յաճա-
խակի: Պէտք է բարեփոխել դրութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Ապրիլի 16-ին ուսուցչի եկեղեցին Բարձրա-
գոյն հրամանով ստացաւ խճճի ազատութեան
արտօնութիւնը: Այս խոշոր և Էֆօրմի առիթով
խօսում է ուսուցչի ամբողջ մասնու: Անա մի
քանի լրագրների տեսութիւնները:

«РАССВЕТЪ» լրագրը գրում է.

Ուսուցչի երկրի լուսագոյն մարդիկ սոս-
կում էին այն կրօնական հալածանքներից,
որոնք օրը ցերեկով կատարվում էին մեզ
մօտ, կատարելապէս և ուղղակի փաստով
ոստիկանութեան և ինքնակալութեան տակ
գտնվող օրթոդոքսութեանը: Վերջապէս, սյս
տարի միխիստրների կոմիտէի, զբաղվե-
լով մօր հասցած կարգերը բարեփո-
խելու գործով, վեց նիստ նուիրեց կրօնա-
կան համաբերողութեան ընդհանուր հարցին
և սկզբունքի տեսակէտից ամենակարեւոր
նշանակութիւն ունեցող այն հարցին, որ օր-
թոքոքսութիւնից հետագանքներն էր վերա-
բերվում. դրանց հետ ընկնում էին և հնա-
մէկների, աղանդաւորների, այլափառ քրիս-
տոնեայ և աշխարհաւոր ոչ քրիստոնեայ դա-
ւաւորութիւնների իրաւունքները որոշող հիմ-
քերը:

Արդարութեան համապատասխանող այդ
շարժման անմիջական հետևանքն էր Միա-
պետի համար, որ միշտ ճանշող հոգեկան
ցանկութիւն ունէր գործել հպատակների
կերպերում ամենաազատ կրօնական
սկզբունքների ոգով:

... Եւ ահա բացվեց բանտի դուռը, լոյս
թափվեց գեղատափորի մէջ: Համոզմունքների
համար տանջվածները դուրս եկան զարկա ա-
ռանց դողալու, մեղմացած իշխանութեան
նշանով, ստնում են հանգիստ երեսներ ծոցը,
արևոտ օրվայ ճառագայթների տակ:

Տիրապետող եկեղեցուն պատկանողները
այսուհետև կարող են, առանց կարծիքի
նայել այն մարդկանց աչքին, որոնց ճըն-
շում էր կրօնական անհաւասարութեան ան-
արդարութիւնը: Բայց չը պէտք է թագցնել
և դառն ճշմարտութիւնը. պարզապէս
այնքան ցնցված է ձևականութիւններից,
բերօղբատրական աւերակութիւններից, ոչ
քրիստոնէական ոգու տրեպաւտութիւնից,
որ սկզբում պէտք է սպասել, որ եկեղեցուց
հեռացողները շատ կը լինեն: Բայց այս բանը
չը պէտք է չիսթեցնէ, ոչ էլ վախեցնէ. եկե-
ղեցին անխորտակելի կը մնայ և նրա պա-
տանդանի մօտ մերկեց յետոյ նորից կը
վերադառնան խաղաղված աշխարհը:

«НОВОСТИ» լրագրը գտնում է, որ այս
կարևոր բեֆօրմը առաջին շօշափելի և էա-
կան երաշխաւորութիւնն է ընդհանուր բե-
ֆօրմների գործում:

Ճիշդ է, իսկապէս այս առաջին և իրական
աշխույթիւնը դեռ չէ կարող զբաւակնել լի-
նել թէ միւս, աւելի կարևոր պետական
վերանորոգումները նոյնքան աջող կերպով
կերականանան, իսկ այդ վերանորոգումնե-
րի մէջ առաջին տեղը պատկանում է օր-
դովրդական ներկայացուցչութեան: Բայց
այն հանգամանքը, որ զբաղվող Ռուսաստա-
նում խճճի իսկական ազատութիւն է հաս-
տատվում, մեզ տալիս է առաջին փաստա-
կան հիմքը յուսալու, որ վերանորոգում-
ների գործը կը հասցվի իր վախճանին:

«Биржевые Вѣд.» լրագրը գրում է.

Փիլիսոփայական մտքով հասկացված խճճի
զուտա՝ ազատութեան տեսակէտից դեռ շատ
քան պէտք է ցանկալի: Մի քանի հիմքեր
դեռ միայն գծազրկված են և նրանց վիճակը
առ յայժմ գտնվում է առանձին խորհրդակ-
ցութեան ձեռքին: Հնարաւոր է, որ մասնա-
ւոր յօդուածներ և ծանօթութիւններ կը պա-
կասեցնեն սկզբունքով ընդունված որոշում-

ները շատ բան խոստացող բնաւորութիւնը.
բայց համաբերողութեան այն ոգին, ազատու-
թեան այն սովը, որոնք պարզ զգացվում
են նոր կարգաւորութիւնը կարգալիս, բաւա-
կան հաստատուն կերպով թելադրում են,
որ կրճատութիւնի վտանգը չափազանց մեծ
լինել չէ կարող:

Իսկ հին անհամբերողութիւնը շարունա-
կում է գործել: Ա. Պրուզալին, որ շատ լաւ
ուսումնասիրել է ուսուցչի աղանդների դրու-
թիւնը, գրում է «НОВОСТИ» լրագրի մէջ:

Ջարմանալի բան: Ջրնայած ամենքին լաւ
յայտնի մանիֆէստներին և հրովարտանե-
րին, որոնցով յայտարարված է կրօնական
համաբերողութիւն, չը նայած միխիստրների
կոմիտէի հանրածանօթ որոշումներին, ու-
րոնցով ջնջված են ոստիկանական հալա-
ծանքները աղանդաւորների դէմ, չը նայած,
վերջապէս, ներքին գործերի պ. միխիստրի
հրատարակած շրջաբերականին, որով առա-
ջարկվում է անյապաղ դադարեցնել կրօ-
նական գործերի մէջ գործադրվող ճնշում-
ները, սրանք, այս ճնշումները շարունակ-
վում են առաջվայ պէս, կարծես ոչինչ չէ
պատահել:

Այս «զարմանալի բանը» նկատված է և
շարունակ նկատվում է պետական կեանքի
ուրիշ շատ շրջաններ մէջ էլ: Այդ է պատ-
ճառը, որ այժմ ժողովրդական բոլոր խաւերը,
թէ արմատական և թէ նոյն իսկ պահպանու-
ղական, հասկ են այն եղբակցութեան, որ
օրինականութիւնը ապահովելու միակ իրական
երաշխաւորութիւնն է ժողովրդական ընտրած
ներկայացուցիչների միջոցով՝ երկրը կառա-
վարելու:

ՄԱՍՈՒԼԻՆ ՎՍԵՆ ԶԷ

Անդրկովկասի ազգաբնակչութիւնը բաղկա-
ցած է բազմաթիւ տարրերից: Այդ մասը
ազգութիւնները շատ խառն բնակչութիւն
ունեն: Բայց ամենից աւելի բազմաթիւ և
տիրող տարրերն են թուրքերը, վրացիները
և հայերը:

Թուրք տարրի բնակչութեան կենտրոնա-
տեղին պէտք է համարել Մուղանի և Միլի
անապատները և Կասպեան ծովի ափերը:
Վրացիների կենտրոնավայրերը գտնվում են
Քուրթայիսի նահանգում և այդ նահանգի
շուրջը համակենտրոնական շրջանով: Իսկ
հայերի բնակավայրերն են Ախալցխայից
սկսած՝ Ախալքալաքի, Լոռիի, Ղազախի, Բօր-
չալուի, Արեւմտադրօպոլի, Կարսի, Էլմիաձնի,
Երևանի, Գանձակի, Շուշիի և Զանգեզուրի
շրջանները:

Այդ շրջաններում ամենից անխառն ազգա-
բնակչութիւն ներկայացնում են վրացիները,
յետոյ թուրքերը, իսկ ամենից վերջը հայերը:
Ամեն տեղ հայերը խառնված են թուրքերի
հետ, բայց յիշված շրջաններում հայերը կամ
հաւասար են թուրքերին կամ նրանցից փոքր
ինչ աւելի են:

Գովկասի ներկայ վարչական բաժանումները
աւելի ևս խառնակ վիճակ է ստեղծել ազ-
գութիւնների վերաբերութեամբ:

Օրինակ վերցնենք Գանձակի նահանգը:
1897 թ.ի միօրեայ աշխարհագրի ժամանակ
այնտեղ կար 878,185 բնակիչ: Դրանցից
թուրքեր 552,848, հայեր 293,632, մնացած
ազգութիւններ 31,705:

1905 թ.ի յունվարի 1-ին «Կաւկազ»-ի ա-
նկընդ նոյն նահանգում եղել է 951,791 բնա-
կիչ, որից 589,941 ը թուրք է, 310,052 ը
հայ, իսկ մնացածը միւս ազգութիւնները:

Գաւառների համեմատ բնակչութիւնը բա-
ժանված է եղել այսպէս.

1) Գանձակի գաւառ .	137,810 հոգի.
2) Ղազախ .	120,247 »
3) Շուշի .	123,337 »
4) Զանգեզուրի .	152,488—553,882 »
5) Նուխու .	98 884 »
6) Զելանդի .	77,749 »
7) Արեւի .	69,665 »
8) Զերալայի .	71,851—318,149 »

Գումար . 852,031

Գլխաւոր 3 քաղաքներում կար.

1) Գանձակում . . .	36,895 հոգի.
2) Շուշիում . . .	33,195 »
3) Նուխում . . .	29,770 »
Գումար . . .	99,860

Ընդհանուր գումար . 951,891

Ուրիշ պատկեր կը ստացվէր, եթէ այդ
նահանգը կազմված լինէր ազգաբնակչան ա-
ւելի խելացի տեսակէտով. եթէ հանէին Զե-
լանդի, Արեւի և Զերալայի ու մասամբ Նու-
խու գաւառները իբր թուրքական բնակա-
վայրերի սահմաններում գտնվող տեղեր և
խառնվէին դրացի թուրքական տափարակ
շրջանների հետ, իսկ սկզբի 4 գաւառները,
իբր հայութեան բնակավայրեր բաղադրէին
մասեր, կամ առանձին, կամ դրացի հայաբնակ
մասերի հետ միասին մի նոր բաժանմունք
կազմէին: Այն ժամանակ տարբեր դուրս կը
գար հայերի և թուրքերի թւերը յարաբերու-
թիւնը:

«Кавказъ» պաշտօնական լրագրի իր № 101-
ում «Елисаветпольские Отголоски» վերնա-
գրով բանասիրականում առաջ է բերում այդ
թւերը և գտնում, որ Գանձակի նահանգում
թուրքերը 61,9 տոկոս են կազմում, իսկ հա-
յերը 32,30%:

Կրկնում ենք, այդ թւերը մէջ կայ մի խո-
շոր թւերմացութիւն, մի կեղծիք: Հայի բնա-
կավայրի մի կտորը խառնված է թուրքերի
բնակավայրի հետ, միւս կտորը (Ախալքալաքի,
Ախալցխայի) խառնված է զուտ վրացական
մասերի հետ և յանկարծ... դուրս է գալիս,
որ հայն ամեն տեղ մի ողորմելի փոքրամաս-
նութիւն է, թուրքից 2 անգամ պակաս...:

Պէտք է ձգտել աւելի խելացի աղմուկա-
տրաւով բաժանման, համաձայն ցեղերի տե-
ղաւորութեան, ազգերի բաշխման:

Բայց ինչ էլ որ լինի, առ այժմ փաստն
այդ է: Նայենք, թէ «Кавказъ»-ն այդ փա-
տերից ինչ հրէշաւոր եղբակցութիւններ է
հանում:

Ինչ կասէր, ընթերցող, եթէ բարեկիրթ
համարվող մի պետութեան ներկայացուցիչ,
փրփուրը բերանին, սկսէր ապացուցանել, որ
իր երկրի այսինչ տարրը կենդանի է մնացել,
չէ կոսովել, թէ և նա մի ողորմելի փոքրա-
մասնութիւն է:

Ինչ անուն կը տայի մի գերմանացի նա-
հանգապետ, որը ցոյց տար, թէ ինքը հերոս
է, որովհետև գերմանացիների ձեռքով չէ կո-
տորել տուել Պօզնանի լեններին:

Ճիշդ մի այդպիսի վարմունք թող է տալիս
իրան «Кавказъ»-ը:

Առաջ բերելով մեր վերևում յիշած թւերը և
հայերի ու թուրքերի թւերի տոկոսային յա-
րաբերութիւնները, «Кавказъ»-ը ասում է հե-
տեւեւ կլասիկական բառերով:

«Առաջ բերված Գանձակի նահանգի հայ
և թուրք ազգաբնակչութեան համեմատական
թւերից յետոյ՝ ամեն մի ոչ-կանխակալ
կարծիքների տէր ընթերցողը համար պարզ
պէտք է լինի, թէ օրպիսի օրպիսի վտանգ
էր սպանում այդ նահանգի հայերին Բա-
գուր շարքից յետոյ և թէ որքան լանջ ու
եռանդուն աշխատանք են գործ դրել նա-
հանգապետ Ն. Ա. Լուսյանուն և տեղական
ինտելիգենցիայի ներկայացուցիչները պահ-
պանելու երկու ազգութիւնները բնական և
խաղաղ յարաբերութիւնները:

Այդ բաներում հնչում է և շողորմութիւն
դէպի նահանգապետը, և դիտաւորեալ կեղծիք:

Ամբողջ Պարսկաստանում ընդամենը 250,000
հայ կայ: Բայց նրանք դարբերով ապրում են
խաղաղ մահմեդական տիրոջների հետ: Դա-
րբերով կողք կողքի ապրել ենք մեն Գովկասում
մահմեդական թուրքերի հետ, ունեցել ենք
մասնակի ընդհարումներ, բայց երբէք, ոչ մի
բազմ այս կամ այն նահանգում երկու չէ ե-
ղել ընդհանուր կոստածի, ընդհարման ու ա-
րեւնեղութեան:

Մասունքն անվայել է այդ լեզուն: Դրանով
ոչ թէ կրքերն են հանգստանում, ժամանակա-
ւոր քամիները հանգարտվում, այլ ընդհակա-

ուակը. այդպիսի լեզու բանեցնելով, «Кав-
каз»-ը տգետ թուրք ու հայ ամբողջ գլխով
զարթոնեցում է մի միտք. «Եթէ նահանգապետը
և խնամիրդներն ջանքեր չը գործ չեն Երև,
կը նշանակէ մենք պէտք է անպատճառ իրար
վրա յարձակվենք, իրար արևուն խմենք»:
Բայց չը կային գեռ ինտելիգենտներ, չը
կար և այդ նահանգապետը, իսկ հայն ու
թուրքն իրար չէին կոտորում: Դա դեռ քիչ է.
չը կար և ուսանական տիրապետութիւնը Դան-
ձակի նահանգում, բայց հայն ու թուրքն իրար
ընդմիմեան չէին: Լինելու էին յաճախակի
դժբախտութիւններ, բայց երկու հաւասար իշխա-
նութիւններ չկային: Դի կողմում կանգնած էին
հայ մէլիքները, իսկ միւս կողմում թուրք խա-
նները, որոնք յաճախ ինքնակոչ ուղտուղտոր-
ներ էին:

Մամուլը կոչված է համերաշխութիւն, եղ-
բայրութիւն և խաղաղութիւն բարոյներու: Իսկ
«Кавказ»-ի յօդուածը կը բեր գրգռող, ազդու-
թիւններն իրար դէմ հանող բնաւորութիւն
ունի:

Դա վէրլիզայի հոգու մնացորդն է:
Դա անվայել է մամուլի մեծ կոչումին:
Ուստի

ՆԱՄԱԿ ՔՈՒԹԱՅԻՍԻՑ

Ապրիլի 22-ին

Երեքշաբթի, ապրիլի 19-ին, Ձատկի եր-
րորդ օրը, նորերս այստեղ եկած Բաթումի
հայ-կաթօլիկները հովիւ հայր Պուշինեան,
տեղիս կաթօլիկաց եկեղեցում հայերէն
լեզուով հանդիսաւոր պատարագ մատուցեց:
Պատարագին մասնակցում էր նաև եկեղեցա-
կան երաժշտութիւնը: Այդ բանը Բուխար-
սում նորութիւն լինելով՝ եկեղեցում հաւաք-
վել էր անգործ ընտանիքներ: Ներկայ էին
նաև երկու հոգի վրացի քահանայ: Պատա-
րագի միջոցին պատարագէից օրվայ համա-
պատասխան քարոզ խօսեց: Ժողովուրդը
ցրվեց միմիկարական տրամադրութեամբ: Շատ
լաւ կը լինէր, որ վարդապետը տարվայ գոնէ
նշանաւոր տօներին կընէր այդ բանը, որով
հոգևոր միմիկարութիւնից զուրկ տեղիս հայ-
կաթօլիկ ժողովուրդը իրան միմիկարված կը
զգար: Միայն չէր բան մտաւցել էր հայր
Պուշինեան: Նա չէր հրաւիրել տեղիս հայ
եկեղեցու բառաւոր երգեցիկ խումբը: Տնդիս
հայ եկեղեցին ունի բաւական լաւ կազմած
երկեսո երգեցիկ խումբ և եթէ նա խնդրէր,
խումբը ուրախութեամբ կուղարկէին և պա-
տարագը աւելի հանդիսաւոր և փայլուն կը
լինէր, մասնաւորապէս որ այժմ հայ-կաթօլիկներ
բոլոր եկեղեցիներում մտցրված է Եկմայեանի
եղանակը: Այդպէս է անում Թիֆլիսում հայր
Գաբրիէլ վարդապետ Նահապետեան թէ հան-
դիսաւոր պատարագի և թէ յուղարկաւորու-
թեան ժամանակ: Միւս օրը նոյնպէս հանդի-
սաւոր պատարագ մատուցվեց կաթօլիկներ
հին գերեզմանատան եկեղեցում, որը մի շատ
գեղեցիկ վայր է քաղաքի բարձր մասում:
Այդտեղ արդէն բացի կաթօլիկներից հաւաք-
վել էր և օտարազգի բազմութիւն: Այստեղ
էլ հայ-կաթօլիկները հոգևոր հայրը նոյն վի-
ճակի մէջ է, ինչ որ Թիֆլիսում:

Այստեղ երկաթուղին մի կատարեալ պա-
տահատ է դառնել վաճառականների համար:
Ապրանքը իր ժամանակից մի քանի շաբաթ
և մինչև անգամ մի քանի ամիս ուշ է գալիս:
Իսկ եկած ժամանակն էլ վաճառները փչացած
են լինում և շատ ապրանք գողացված: Երկա-
թուղու վարչութիւնը մեծ անփութութեամբ է
վերաբերվում մասնաւոր դէպքի կերտման և
անպատասխան հաւթային արդիւնների վաճօն-
ները: Մի հատ վաճօն չէ գալիս, որ փչացած
չը լինի: Ամեն մի վաճօնի համար ապրանքա-
տէրը ստիպված մի քանի րուբլի փող է ծախ-
սում փականագործների վրա, որ հնար լինի
նրան դատարկել բաւական քանակութիւն
գետնին թափելով: Չը նայելով, որ վաճօնի
վրա նշան է լինում կպցած, թէ՛ «сблудеть
ремонтъ», բայց վաճօնը դարձեալ ուղարկվում
է առանց բէմանի: Գիշերը գծի վրա հսկո-
ղութեան բացակայութեան պատճառով վա-
ճօնները կոտորվում և ապրանքը գողացվում է:
Մի վաճօն մաղուտ այնպիսի խայտառակ դուր-
սեանք հասաւ այստեղ, որ ապրանքատէրը հրա-
ժարվեց ընդունել և ահա մի շաբաթից աւել է,
որ մնում է գծի վրա կանգնած: Այստեղի ձկնա-
վաճառները Հալի-Կարուլից ձուկ են պատ-
ւիրել բերելու արագութեամբ վաճօններով,
որպէս զի Մալիզադարին ստացած լինեն այդ
օրը վաճառելու համար, բայց ապրանքը այս-
տեղ հասաւ Ձատկից յետոյ չորեքշաբթի օրը,

որով և մեծ վնասի ենթարկվեցին վաճառա-
կանները:

Վերջին ժամանակներս առ հասարակ ապ-
րանք շատ քիչ է գալիս Բուխարիս, իսկ դրա
փոխարէն ամեն օր բերում են բանտարկեալ-
ները անգործ բազմութիւն զանազան տեղե-
րից: Այժմ ապրանքների բոլոր արկղերը
զինուորական օֆիցերի ներկայութեամբ են
բացվում, որպէս զի ծածուկ գէնք կամ փա-
փուշտ չը տեղափոխվի:

Բաղադրային կասսան բոլորովին աղքատ դը-
րութեան մէջ է բառիս բուն նշանակութեամբ:
Մրան իբրև կապցոյց ծառայում է այն
հանգամանքը, որ քաղաքային վարչութիւ-
նը վերջերս Բաթումից մի վաճօն կէ-
րտին էր ստացել վերագիր վճարով
Այդ փողը վճարելու համար պակասում
էր կասսայում 60 րուբլի: Երեք օրվայ ըն-
թացքում հաղկ կարողացան լրացնել այդ
չնչին գումարը, որով և ստիպված եղան եր-
կաթուղու վարչութեան տուգանք վճարել: Սա-
կայն թէ հեծեալ և թէ հասարակ զինուորների
այստեղ համախառնվելու աւելի անելանելի վի-
ճակի մէջ է դրել քաղաքային վարչութեանը,
որովհետև նրանց քաղաքն է կերակրում:
Ս. Մաղարեան

ՆՈՒՐԻՆ ԼՈՒՐՈՐ

Կովկասեան գերդատնետեական ընկերու-
թեան երկվայ նիստը, ուր պէտք է ըննու-
թեան ենթարկվէր Յ. Փիլախանի գեղարու-
նորային հարցի մասին, անկախ պատճառ-
ներով յետաձգվեց ուրիշ օրվայ: Զինուորական
մէջ շօշափված են հողատիրութեան, հողի կա-
պաւորութեան և հողից օգտվելու հարցերը:

Ներկայումս, ինչպէս յայտնի է, հոգևոր
սէմինարիաներն առանձնապէս աւարտողներն
ընդունվում են մի քանի համալսարանների
որոշ ֆակուլտետներում, այն էլ որոշ լրա-
ցուցիչ ըննութիւններ տալուց յետոյ: Ամեն
մի համալսարանի ղեկավարվում է իր կանոն-
ներով: Որովհետև այդպիսի զանազանակեր-
պութիւնը անյարմար է, ժողովրդական լու-
սաւորութեան միմիկարութիւնը յանձնել
մի յատուկ յանձնաժողովի ծրագիր մշակելու
բոլոր համալսարանների բոլոր ֆակուլտե-
տներում սէմինարիաներին ընդունելու համար:
Միմիկարութեան մէջ ձեռքի տակ ունեցած
նիւթերից երևում է, որ Պետերբուրգի, Իւ-
րիմի, Տոմսկի և Նովոռոսիյսկի համալսա-
րանները կարծիք են յայտնել, որ սէմինար-
իաներին թոյլատրվի մտնել բոլոր ֆակուլ-
տետները, որոշ աւարկաններից լրացուցիչ
ըննութիւններ տալուց յետոյ: Երևում է, որ
զինուորական-բժշկական ակադէմիայի խոր-
հուրդն էլ սէմինարիաներին ընդունելու
կողմն է: (Ноб.)

Թիֆլիսի մահմեդական առևտրականները
վճռել են իրանց խանութները փակ պահել
ուրբաթ օրերը, փոխանակ Վիքարի օրերի:
Այդ առիթով նրանք կազմել են համախառն-
կան վճիռ, որը պէտք է ներկայացվի քաղա-
քային վարչութեան հաստատութեանը:

Կիրակի, ապրիլի 24-ին կայացաւ Թիֆլիսի
մի խումբ ձայնաւորների խորհրդակցութիւնը
Թիֆլիսում հիմնելու Մոսկվայի կենտրոնական
բիւրօի բաժանունը Կովկասի քաղաքների
ինքնավարութիւնների համար: Ձայնաւորների
խորհուրդը անհրաժեշտ դատեց այդպիսի մի-
կենտրոնական բիւրօի գոյութիւնը Մոսկվա-
յում, որ պէտք է հաւաքէ Ռուսաստանի բոլոր
քաղաքների դոմաններն այն վճիռները, որոնք
հասարակական նշանակութիւն կունենան, և
պէտք է այդ վճիռներն ուղարկէ իր ստորա-
բաժանումներին, որպէս զի պետութեան բո-
լոր քաղաքային ինքնավարութիւնների ա-
ռաջարկական քայլերի մէջ միօրինակութիւն
և նմանութիւն պահպանվի: Որոշուողն իր
կողմից ընտրեց մի մասնագիտով, որը պէտք է
մշակէ ծրագիր Թիֆլիսում էլ հիմնելու մի
այդպիսի ստորաբաժանում Կովկասի բոլոր քա-
ղաքների ինքնավարութիւնների համար:

Նշեցնելու երկաթուղիների վրա բու-
ժէտներ պահողները անցեալ օրը ժողով արին
Թիֆլիսում և որոշեցին բաւարարութիւն տալ
իրանց ծառայող գործադուլ արած աշ-
խատաւորների արդարացի պահանջներին
մասին:

Մամուլէդի աւանդ արդէն վարչական կար-

գով, իբր էկզէկուցիա, հաւաքել են 5000 րուբ-
լի և յանձնել Բուխարիսի գանձարանին ներ-
կայ ապրիլի 20-ին, իբր նպաստ վերջին ժա-
մանակներս սպանված պրիստաւ Զիկվիլաձէի
ընտանիքին:

Թիֆլիսում վերջերս հաստատված «ապարա-
րանական գործերում աշխատողների փոխա-
դարձ ընկերութիւնը Կովկասում» մտադրու-
թիւն ունի մայիսի 9-ին Արտիստական ընկե-
րութեան թատրոնում գրական երաժշտական
մի ցորեկով թաւ Շիլլերի մահվան 100-ա-
մեակի առիթով: Հայ, վրացի և ուսու դրամա-
տիական դերասանները և դերասանուհիները
պէտք է արտասանեն մեծ բանաստեղծի գոր-
ծերից կտորներ: Մօտ օրերս կը մշակվի ման-
րամասն ծրագիր:

Վերջին ժամանակներս, ասում է «Черн.
Бет.» լրագիրը, Ռիօնի գործաւոր հրամա-
նատար գեներալ-մայոր Ալեքսանդր Աւարսկին
Բուխարիս է ուղարկում ձերբակալվածներ՝
10—60 հոգուց բաղկացած խմբերով: Դրանք
Բուխարիսի, Սէնաքի և Օգուրգէթի գաւառ-
ներում վերջին գեղացիական անկարգու-
թիւնների ժամանակ ձերբակալված անձերն են:

«Слово» լրագիրը լսել է, որ Բագուում
սկսել է պտտել մի յաճառ լուր, որի հա-
մաձայն սէնատոր Կուզմիսկին իբր թէ հրա-
ժարվում է շարունակել իր սէնատորական
վերաըննութիւնը:

Ապրիլի 21-ին, ասում է «Кав.»-ը, Շարո-
պանի գաւառի Բոխմէտի գիւղի բնակիչ Կոցա-
տիձէն և Նազարովն փորձ արին սպանելու
աշուտական Գուրգէնիձէին: Հետեւեալ առա-
ւօտը Բիւզօրի պրիստաւը պատահաբար տեղն
ուղարկեց կազակներ և ստորաֆիլին, որոնք
և ձերբակալեցին յանցաւորներին: Այն ժամա-
նակ զինված ամբողջ յարձակվեց կազակ-
ների վրա, ձերբակալվածներին խելու նպա-
տակով: Սկսվեց մի կատաղի հրացանաձու-
թիւն, որի ժամանակ ամբողջ վերաւորվե-
ցին և սպանվեցին մօտ 20 հոգի:

ՄՍԱԻՐՈՂՈՒԹ Եւր գրում են. «Ապրիլի
լույս 21-ի գիշերը այնպիսի չարագործներ՝ կո-
տրեւորով կողպէցները՝ մտել են հայոց եկե-
ղեցին, կողպտել են եկեղեցական իրեր և
առձեռն դրած Յափշտակի են հետեւալ ար-
ժաթէ իրերը. մի միւսունի աղաւնի, մի մեծ
սեղանի խաչ պատառնաղանով, երեք զանազան
սեծութեան խաչեր, մի սեղանի մեծ սրբու-
թեան անօթ, երեք սկիհ զանազան մեծութեան,
իրանց մաղձաններով, ութ հատ մոմակալ-
ներ, մի փորթիկ մասնատու: Առձեռն դրած
տարիք են գանձանակատուից մօտ 100 րուբ-
լի, մոմավաճառի կասսայից, նրա ասելով, —
մօտ 50 րուբլի, նաև 45, նոյնպէս մոմավա-
ճառի ասելով, մօտ 25 ֆունտ (90 րուբլի):
Ընդամենը եկեղեցու ֆեստը հասնում է մօտ
6000 րուբլու: Յուսով ենք, որ ռուսիկանու-
թեան ձեռք առած միջոցներով սրբապիղծ ոճ-
րագործները կը գտնվեն և գէթ այս անգամ
կը պատժեն, իսկ տեղական հայ համայնը
խելոյն կը հոգայ իր եկեղեցու անհրաժեշտ
նիւթերը: Հրաւիրում ենք, մասնաւոր, հա-
րուտ բանկիրուհի տիկին Պապովանի ու-
շադրութիւնը, որի հանգուցեալ տունը՝
Ղանքերով է շինված այժմ կողմ փողոցի
յակապ եկեղեցին»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ա. ԳԻՐԱՆ ԵՒ ԻՍԼԱՄԸ

«La Revue» հանդէսի վերջին համարում
(ապրիլի 15 № 8) տպված է մի վերին աստի-
ճանի հետաքրքիր դոկումէնտ, որը անհրա-
ժեշտ ենք համարում ներկայացնել մեր ըն-
թերցողներին, որովհետև դա մահմեդական
խնամիրդներից մի է ոչ ամբողջութեամբ, գոնէ
մեծամասնութեամբ, խոշոր մեծամասնութեան
քաղաքական դաւանանքի մերկացումն է: Այդ
դոկումէնտը պատկանում է Եգիպտոսի Գահի-
նէ քաղաքում լոյս տեսնող իսլամական դիւա-
ւոր օրգանի խմբագրի՝ Մուստաֆա Գամիլի
փաշայի գրչին:

«Մեծ հետաքրքրութեամբ կարդացի—գրում
է Գամիլ փաշա—պ. Ալեքսանդր Իւլարի յօ-
դուածը «Revue»-ում և, ինչպէս ձեր բոլոր
ընթերցողները, հիացաւ այն հմուտ ու ճար-
տար եղանակի վրա, որով հեղինակը ուսում-
նասիրել էր իսլամական երկրներում անգլիա-

կան ձգտումների հարցը: Բայց ես նրանից
թոյլտուութիւն եմ խնդրում ուղղելու այնպի-
սի սխալներ, որոնք իմ կարծիքով խիստ կա-
րեւոր են:

«Մի քանի տարիներից ի վեր է արդէն, որ
մահմեդական աշխարհը զգացել և հասկացել է
թէ Անգլիան աշխատում է իր հաշիւին իրա-
կանացին Նապօլէօնի երազը—ճանկը գցել
Ուլիֆայութիւնը և իր բարոյական տիրապե-
տութեան տակ առնել բոլոր մահմեդականնե-
րին: Եգիպտոսի գրաւումը այս շէնքի առաջին
բարձր եղաւ և բոլոր նրանք, որոնք հետևում
են ուղղաբարութեամբ անգլիական քաղաքակա-
նութեան, այն համոզումն են կայացրել, որ
անգլիացիների ներկայութիւնը Նեղոսի հով-
տում և Կարմիր Մովի նաւահանգստներում
մի լուրջ սպառնալիք է Արաբիայի և օսմա-
նեան պետութեան համար:

«Անգլիացի գրողները այս միտքն են հաս-
տատել յայտարարելով՝ որ «խալիֆայի» փո-
փոխութիւնը չը պէտք է սարսափեցնէ մահ-
մեդականներին: Մի քանի տարիներից ի վեր
անգլիական կառավարութեան՝ Թիւրքիայի
դէմ մղած կռիւն բաց է արել մինչև անգամ
կողերի և նրանց աչքը, որոնք չէին ուղղում
տեսնել:

«Բայց քանի այդ դիտաւորութիւնները ա-
ւելի ակնյայտ կը դառնային, բոլոր մահմե-
դականները յարումը դէպի սուլթանը և օս-
մանեան խալիֆան աւելի կարագնալէր և
աւելի իրական կերպարանք կը ստանար: Ման
եկէք Իսլամի բոլոր երկրները, դուք կը հան-
դիպէք միմիկար Թիւրքիայի կուսակիցներին:
Այդ զգացումը վառ պահողները Թիւրքիայի
գործակալները, էմիրները չեն, ինչպէս կար-
ծում են եւրօպացիներից շատերը, այլ իսլա-
մական ինքնապահպանութեան ոգին, այն
քաղաքները, որ ունի իւրաքանչիւր մահմեդա-
կան նոր դժբաղդութիւնների հանդիսատես չը
լինելու համար, և բոլորի այն համոզումը,
թէ Թիւրք իշխանութեան թրժանումը կամ
տկարացումը կը լինէր Իսլամի և իսլամութեան
կործանումն իսկ:

«Ես երբէք չը պիտի կարողանամ բացատ-
րել, թէ մահմեդականներ խոշոր սեծամաս-
նութիւնը որ աստիճան տանելով առում է իր
հոգու խորեցից, Արաբիայի այն գաւառանե-
րին, որոնք իրանց հարազատ մահմեդական
եղբայրների դէմ օտարի դաշնակիցներն են
դառնում:

«Իսլամը այս րօպէիս գգում է, որ ապրե-
լու և յարապակիս համար կարելի ունի միու-
թեան: Այն անձը, որ ձեռնարկում է խառ-
նակութիւններ սերմանելու կամ ատելութիւն-
ներ և պառակտումներ սնուցանելու, մենք
նրան նկատում ենք իբրև թշնամի: Ամեն իշ-
խան, մեծ կամ փոքր, որ յանձն կանէր
Թիւրք խալիֆայի դէմ Անգլիայի գործիքը
դառնալու, և մեր կողմից կը նկատվէր իբրև
դաւաճան և բոլոր մահմեդականներից կատ-
վէր ու կարճամարմէր: Մենք այդ պառակ-
տումների համար շատ թանգ վճարեցինք և
զիտենք թէ նա մահացու թոյն է: Անգլալու-
զեան, Ալփրիան, Տուհիսը, Եգիպտոսը և այն
բոլոր երկրները, որ մենք ձեռքից հանեցինք
կամ որ իրանք իրանց անկախութիւնը կորց-
րին, նորէն միայն պառակտում էր:

«Պ. Իւլարը կրկնեց իր յօդուածում, որ Անգ-
լիան ձգտում է խղիվին դարձնել իր երազած
խալիֆան, որը պիտի ծառայէր իր ծրագրե-
րին: Բայց միթէ նա մոռացել է, որ խղիվը
այն էլ իսլամն է, որ ամենից աւելի լաւ է ի-
մանում, թէ ինչ արժեն Մեծ-Բրիտանիայի
խոստումները: Միթէ նա նրանից չը խլեց նրա
բոլոր իրաւունքները և նրա երկրի անկա-
խութիւնը, այնպէս հաւատացնելով՝ որ նրա
գահը պիտի ամբապնէ և Եգիպտոսը պիտի
վերադարձնէ եգիպտացիներին: Ուրեմն ինչ
կարող է սպասել Անգլիայից:

«Շիշը, թէ որ անցեալ տարի, արաբները և
եգիպտացի ուստաւորները միջև վէճեր ծա-
գել են, բայց նրանց լուծել է ոչ թէ խղիվը,
այլ նորին վահապետութիւն սուլթանը: Ողբի-
վը, ինչպէս այդ իր պարտականութիւնն է,
զիմել էր միայն սուլթանին: Բոլորովին սխալ
է, որ շէրիֆները՝ Մէքքայի մեծ շէրիֆի հետ
իրանց ունեցած մի վէճը վերջացնելու համար
զիմած լինեն խղիվին: Այդ ֆանտազիստ լու-
րերը տարածվել են որոշ նպատակներով անգ-
լիական մամուլի կողմից—նրա համար, որ
խղիվին վարկաբեկ անեն իր վահապետի
(սուլթանի) և իր ժողովրդի առաջ: Եւ արդէն
խղիվի և սուլթանի յարաբերութիւնները շատ
լաւ են և եգիպտական ժողովրդի զգացմունք-
ները դէպի Թիւրքիան այնքան ուժեղ են, որ

արար խաղի ֆառ ունենալու ամեն միտք ընդ-
միջող դատապարտված է ճգնադատութեամբ:

«Ճգնադատական ժողովուրդը» Թիւրքիայի ա-
մենամանկունէր ժողովուրդն է արդարեւ. ամե-
նից բանիմաց է նա օտար ինտրիգներէ մա-
սին և գիտէ, թէ իսլամութեան ամենակարեւոր
ֆակտորը ո՞վ է: Պ. Իւլալը չէ սխալվում, երբ
խօսում է այն ազդեցութեան մասին, որ ներ-
գործում է Գահրէմէն Իսլամի մատուցած
շարժման վրա: Բայց նրա այն տեղեկութիւն-
ները, որոնց համեմատ իբրեւ թէ ճգնադատը
Փրանսիայից ստուգող, միացել է Անգլիային—
ընդհանրապէս ճշմարտութեան մօտ չեն: Ո՛չ
որ չէ կարող ազգային անկախութեան կո-
րուստը մոռանալ: Այդ վերջը ամեն եզրադա-
շտ սրտի մէջ բաց է և պիտի մնայ, որքան
ժամանակ որ անգլիացիները գրաւեն մեր
հայրենիքը: Անկախութեամբ մենք շատ ենք սա-
ռել Փրանսիայից, և առանց պատմական յի-
շատակներին և Փրանսիական զեղեցիկ գրա-
կանութեան, այդ սառնութիւնը կատարեալ
կը լինէր: Մի կառավարութիւն, որ ստորա-
գրել է անգլո-ֆրանսիական համաձայնու-
թիւնը, իրաւունք չունի զարմանալու այդպի-
սի ֆակտիւր: Բայց այդ սառնութեամբ երբեք մեզ
չէ մղել Անգլիայի դիրքը: Նա մեզ լցրել է
տիրութեամբ և դառնութեամբ. ուրիշ ոչինչ:

«Մի խօսքով, Անգլիան ձգտում է ջնջել
Թիւրք խաղիֆայութիւնը և իր ձեռքում հա-
ւաքել մահմեդական աշխարհի վրա իշխող
գերագոյն զօրութեան դերը: Այդ ծրագրի ի-
րագործութիւնը սկիզբ գրվեց ճգնադատի գրա-
ւումով: Բայց եզրադաշտները երբեք չեն հա-
մաձայնվի Անգլիայի ձեռքում մի գործիք
դառնալով կործանել թէ իրանց, և թէ այն,
ինչ մնում է դեռ աշխարհում իսլամական զօ-
րութիւնից և հմայքից, պիտի սփռնի»:

Մենք մեր կողմից աւելորդ ենք համարում
որ և է դատողութիւն կամ մեկնութիւն տալ:
Գուցէինք միայն առաջ բերել այն ծանօթու-
թիւնը, որ գրել է ինքը՝ «Revue»-ի խմբա-
գրութիւնը, Մուստաֆա Բամիլ-փաշայի յօ-
դուածը հիւրընկալելով: «Այն առանձին դեր-
քը, որ գրաւում է այս յօդուածի հեղինակը,
տալիս է նրա տեղեկութիւններին մասնաւոր
կարեւորութիւն: Դահիբէի մահմեդական գլխա-
ւոր օրգանի տնօրէն Մուստաֆա Բամիլ փա-
շա ուզելի կերպով ներգործում է իր կրօնա-
կիցների մտքի վրա և դժբաղդաբար ներգոր-
ծում է այն ուղղութեամբ, որ ցոյց է տալիս
իր յօդուածը: Մենք ասում ենք դժբաղդաբար,
որովհետեւ, երբ մարդ խորհում է սուլթանի և
նրան շրջապատող մարդկանց բարոյական ար-
ժէքի մասին, մարդիկ որ գործում են ոճիւր
ոճիւրի վրա, սկսած հայերի խղիւղումից և
վերջացած Թիւրք հպատակների կործանու-
մով—մարդ միայն կարող է ողբալ այն ան-
խորհուրդ ձգողութեան վրա»:

S.

ԱՐՏԱԳԻՆ ԼՈՒՐԻՐ

Թիւրքիա: Հայկական պարագլուխ Անդ-
րանիկ, որը այնքան զարգացաւ որ պատճառեց
Թիւրքիային անցնել տարվայ սասունհան
պատմութեան ժամանակ, ինչպէս հայոր-
դում է «Frankfurter Zeitung» լրագրի, հէնց
նոր եկաւ ժենէվ և խօսակցութիւն ունեցաւ
հայոց հարցի ընդհանուր գրութեան վերաբե-
րմամբ Թիւրքիայում: Նա յայտնեց, որ Թիւր-
քիայի հայերը սպասում են իրանց դրութեան
բարեկրթման այժման ազատամիտ ճգնաժամից
Ռուսաստանում: Բայց նրանք ամենին տա-
մարդված չեն դադարեցնելու յեղափոխական
շարժումը Թիւրքիայում, թէպէտ և նա մեծ
գոծաբարութիւն է ներկայացնում այն տեսա-
կէտից, որ մահմետական ազգայնականութիւնը
դեռ ևս չէ հասկանում, որ խօսքը ընդհանուր
ազատութեան մասին է, և հրաժարվում է օգ-
նել հայերին: Նա, Անդրանիկը, այնու ամե-
նային ամենին չէ կապւածում այն բանում,
որ հայերի գործը կը յաղթանակէ, և որ ինքն
էլ կը շարունակէ իր կռիւը: Բերլինի դաշնա-
գիրը ստորագրող պետութիւնները պարտա-
ւոր են միջամտել հայերի դրութիւնը թե-
թեպեցնելու համար. և եթէ նրանք չեն մի-
ջամտում, հայերը կը ստիպեն նրանց անել այդ
բանը. նրանք կը փոխեն իրանց տակնիկան
և այլ ևս չեն խնայի պետութիւնների շահերին:
Այն հարցին, թէ հայերը ինչպէս կարող են
փաստել պետութիւնների շահերին Թիւրքիա-
յում, Անդրանիկը չուզեց պատասխանել: Ապա
խօսակցութեան մէջ Անդրանիկը ջերմապէս
հերքեց այն մեղադրանքը, որ ինքն իբր թէ
այրւում էր քրեական գիւղերը և սպանում
կանանց, երեխաներին և ծերերին: Խաղաղ
ազգայնականութեան վրա նա երբեք յարձակում
չէ գործել: 1897 թիւից մինչև 1904 թիւը նա
31 ընդհարում է ունեցել, բայց ոչ մի անգամ
վերաբերված չէ եղել:

Լրագրի թղթակիցը հէնց այդտեղ էլ հա-
ղորդում է տեղեկութիւններ հայկական ապա-

տաճի մասին: Անդրանիկը մօտ 40 տարեկան
է: Նա վաճառականի որդի է. առաջ կուռւմ
էր հուսկաւոր Սերբիի հրամանատարութեան
տակ, որը 1900 թիւի գերի ընկաւ քրեական
ձեռքը և սպանվեց մի շէյխից: Անդրանիկին
աշխույժեց ընկել վերջինին, և նա նոյն խնջա-
ւոր կարգաւորեց նրան, որով սպանվել էր Սե-
րբի: Գիւրգի զէնքը Անդրանիկը մինչև այժմ
կրում է իր վրա: Այսպէս տեղի ունեցող կռիւ-
ների ժամանակ Անդրանիկը զրկվեց իր եր-
կու ընկերներից, Վահանից և Հայրից:

—Գ. Պօլսից «Речь» լրագրին հետադրում
են. «Եմանից եկած վերջին լուրերը խիստ ան-
հանգստացնող են. արաբները բոլորովին
շարժ ու փշուր են արել Բիզա-փաշային:
Թիւրքական 3 բաւալիօն ոչնչացրել են, 3-ը
դատարկեց եղել փախել են, իսկ 3 էլ նա-
հանջվեց»:

—Մակեդոնիայում գաղաւթիւնները սաստ-
կանում են: Կոմանսօվայի շրջակայքում ցըր-
վեցին սերբական մի հրոսակախումբ, ճա-
նապարհին ալբանական բօշաները ընկնելին
7 սերբերի և տանջանքներով սպանեցին:
Հաւաքվեցին մի քանի հարիւր ալբանացիներ.
Նրանք ընկան Տավանցօ գիւղի վրա: Հազիւ
հազ հարիւր գտնվեց արեւնայի ընդհարման և
գիւղի ոչնչացման առաջին առեւի: Ռուսական
և աւստրիական հիւսկապետութիւնները զեկու-
ցուցանեցին ներկայացրին Զաօրիչանի անկա-
րութիւնների մասին: Նրանք մեղադրում են
ոչ թէ յոյներին, այլ բոլգարներին:

«ՄՇԱԿԻ» ՀՅՈՒԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

25 ապրիլի

ՏՕԿԻՕ: Ռուսաստանը շարունակում է պըն-
դել, որ Չինաստանը խտրութեամբ պահպանէ
չէզոքութիւնը Մոնղոլիայում Տելինից հիւսիս-
արեւմուտք գտնված վայրերում, որպէս զի
ռուսական զօրքերն ապահով լինեն եապոնա-
կան զօրքերի շրջապատյալ շարժումներից: Են-
թաղում են, որ Վլադիվոստոկէ կը յայտնային
էսկադրան շուտով բաց ծով դուրս կը գա
յարաբերութիւն ստեղծելու Ռօժեստովնսկու
էսկադրայի և Վլադիվոստոկէ կենտրոնական
վարչութեան միջև:

ԵՐԵՒԱՆ: Ապրիլի 22-ին գործադուլ արին
կուրսերի, հիւրանոցների և բէսաօրանների
շվեյցարները, սպասաւորները և խոհարարնե-
րը: Գործադուլները ճնշման տակ առևտու-
րը դադարեցրին տրակտիւրները, հասարակ
ճաշարանները և ուսելիք ծախել խանութնե-
րը: Կարգը չէ խանգարվում: Բայց այսինքն
գրեցի աշակերտները կտրատեցին դպրոցի
ապակիները և թափօր կազմեցին քաղաքում:
Ոստիկանութեան միջոցներով կարգը վերա-
կանգնեցին—Այս օրերս արեւնայի ընդհարում
պատճառեց Թուրքական խնջիւրի և հայկական
հալալէ գիւղերի միջև հողային վեճի առիթով:
Փոխադարձ հրաձգութեան ժամանակ վերա-
ւորվել է մի թուրք և մի հայ ստորաժնի:
—Չուլֆայի մօտ Երասխի մէջ խորտակվել է մի
մակոյկ. խողովի են 46 հոգի պարսիկներ:
Կիեւի, 24 ապրիլի Բաղրի կենտրոնական
մասում 100 հոգուց բաղկացած խառն ամբո-
խը, փողոցներն ընկած՝ պահանջում էր խա-
նութիւնը փակել, որ և կատարվեց: Ամբոխը
կազմված էր գործակաւորներից, որոնք պա-
հանջում էին օսոնի պատճառով խանութների
փակումը:

ԲԻԳԱ: Գիւղերով քաղաքի մի ծայրում տուն
գնացող զօրքովոյ Կարչինսկու վրա մի ան-
յայտ մարդ 3 անգամ կրակ արեց. 3 մահացու
վէրք հասցնելով նրան, յանցաւորն անյայտա-
ցաւ:

ԲԱՆԶԱՆ: Երկաթուղու գծի վրա սկսվում է
բուֆետի սպասաւորների գործադուլ:
ԿՕՎՆԱ: Երէկ հրէաների ամբոխը անկա-
րութիւն առաջարկեց՝ ատրճանակներ կրակե-
լով և աղմկելով:

ԲԱԳՈՒ, 25 ապրիլի: Կայարանի և քաղաքի
տնային սպասաւորների գործադուլի լուրը
հնարովի է: Բագուի ժամանակաւոր ոստիկա-
նապետ Շուրիկով:

ԲԵՐԼԻՆ, 24 ապրիլի: Սկսվեցին Շիլլերի
մահվան հարիւրամեակի առիթով հանդէսները:
10ԸԴՕՆ: Զէմբերլէնը բաւական լուրջ կեր-
պով հիւանդացաւ:

ՕՂԵՍՍԱ: Տեղական լրագիրների աշխատա-
կիցները որոշեցին վերականգնել ապագայական
գործի աշխատատեղերի հանգիւղ ընկերու-
թիւնն՝ իրանց նիւթական և բարոյական վի-
ճակը բարելաւելու նպատակով:—Հիւանդանոց-
նաւով ժամանեց պօրտ-արտուրցիւնների 23-ը
խումբը՝ 71 հոգի զինուոր և բանուոր:

ԹԷՂՈՒՆ: Ապրիլի 25-ին Շահը մեկնեց Եւ-
րոպա:

ԿԱՆԻԱ: Մահմեդական հասարակութիւնը

վրդովված է մահմեդական քաղաքամասում
կատարված սպանութիւնով: 150 մահմեդա-
կաններ մեկնեցին Փոքր-Ասիա, այստեղ տեղի
ունեցած խառնակութիւնների պատճառով:
Ապստամբները գրաւեցին Կաստէլի քաղաքը:
Նրանք գրաւեցին մաքսատունը:

ԲԵՂԳՐԱԴ: (Սեփ. թղթ.): Պաշտօնական
տեղեկութիւնների համաձայն, գնդապետ Եան-
կովը, Տօնչիկի կօմիտէի անդամը, 400 հո-
գուց բաղկացած մի չեռայով, անցաւ բոլգա-
րական սահմանը՝ դիմելով դէպի Ուկրէն:
Առաջ ենթադրում էին, որ նա գնում է վրէժ
լուծելու յոյներէ իր մայրենի Զաօրիչանի
քաղաքի կործանման համար բայց այժմ Եան-
կովը մտադրութիւն ի ցոյց տալիս ընդհանուր
ապստամբութիւն յարուցանելու:

ԱԹԷՆԻ: Լուրերին նայելով՝ արքայորդի
Գէօրգի հրաժարական է ուղղւում տալ, վերջին
դէպքերից առաջացած ծանր դրութիւնից
դուրս գալու համար:

ՍԱԶԳՈՆ, 25 ապրիլի: Ներօգնատուի էս-
կադրան անցկացաւ Սալգոնի մօտով:

ԳԻՔՐԱՏՏԱՐ: Անգլիական մի շրջանաւ եկաւ
440 տօնի բնու վերցնելու նաւատորմի համար
Հօնգոնգ տանելու: Մովային իշխանութիւնը
հրաման ստացաւ որքան կարելի է շտապեց-
նել այդ նիւթերի առաքումը:

ՏՕԿԻՕ: Եապօնական մամուլն առաջարկում
է Փրանսիային թողնել իր երկերես դերը և
աւելի լաւ է ուղղակի բռնել Ռուսաստանի
կողմը:

10ԸԴՕՆ: «Թայմսը» հաղորդում է Հօնգոն-
գից «Լաֆֆանի Գործակալութեան» թղթակ-
ցի ուղարկած հեռագիրը, որը Փրանսիական
ցէնզորը Սալգոնում արգելել էր ուղարկել:
Այդ հեռագիրը թղթակիցը հաղորդում է, որ
ինքը այցելել է Կամբանեան ծոցը և անձնա-
կան զետեղութիւնների հիման վրա ասում է,

որ եթէ Փրանսիան թոյլ չը տար ռուսական
էսկադրային վերցնելու թարմ ուսուիլի լիա-
կատար պաշար, օգտվելու Փրանսիական հե-
ռագրով և նաւահանգստում մնալու 10 օր շա-
րունակ, այն ժամանակ ռուսական էսկադրան
շատ գոտարին դրութեան մէջ կը լինէր:
Այդ առիթով գրված առաջնորդողում «Թայմս-
ը» յոյս է յայտնում, որ Փրանսիան ճշդու-
թեամբ ըմբռնում է ներկայ բազէի բոլոր կա-
րեւորութիւնը: Փրանսիայի կողմից մեծ սխալ կը
լինէր մտածել, որ Եապօնիայի բոլոր պահանջ-
ներին կարող է թեթեւ վերաբերվել: Եապօնական
մամուլը և ժողովուրդը համոզւած են, որ
եթէ Փրանսիան անյայտ չը դադարեցնէ իր
սիրալիբ հիւրընկալութիւնը բալտիկան էս-
կադրային, Եապօնիան պէտք է եռանդուն
միջոցներ ղրկէ: Հիւսիս կայ կարծեւ, որ
Լամադունը, որ ուղղւում է պահպանել բարե-
կամական յարաբերութիւններ Փրանսիայի
հետ, Հեռուստ Արեւելում չէզոքութիւնը խախ-
տելու հարցի առիթով համոզեցուցիլ դիմում-
ներ է արել Փրանսիային: Զգուշանքով ու-
ծումը պէտք է հետեւի արագ և վճառաբար,
որպէս զի սուր կերպարանք չընդունէ: Եթէ
Եապօնիայի մեղադրանքներն արդարանան և
Եապօնիան պահանջէ Անգլիայից իր վրա ա-
ռած պարտականութիւնների կատարել, Փրան-
սիան պէտք է աչքի առաջ ունենայ, որ Անգ-
լիան ընտրութիւն անել չէ կարող. նա պէտք
է կատարէ իր խոստացածը:

ՀՈՄ: Միխայիլի խորհուրդն ընդունեց
նաւատորմը զօրեղացնելու ծրագիրը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Գիւնեբալ Լինսկի
հպատակ հեռագիրը ապրիլի 24-ին. «Ղ. Ղ. Ղ. Ղ.
21-ին Եապօնական հեծելազօրը մեր աջ թևի վրա
ճնշեց մեր հեծելազօրի առաջնութեամբ մասերը:
հրաձգութեան ժամանակ վերաւորվեց շտաբ-
կապիտան Կօպտիկը»:

26 ապրիլի
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Ժամատխառի համաձայնակի
դէմ մարտնչող Բարձրագոյն հաստատված կօ-
միսսին որոշեց տարածել 1904 թիւի նոյնիմ-
բերի 3-ին կօմիսսիայի հաստատած կանօննե-
րը ներքին նաւազնացութեան վերաբերու-
թեամբ, նաև Կապիտանի ծովի ռուսական և
պարսկական նաւահանգիստների միջև լողա-
ցող նաւերի վերաբերութեամբ. ազատել Կաս-
պիան ծովում լողացող նաւերին ներկայ պա-
տարազմի տեղադրութեան ընթացքում սեփական
բժիշկ ունենալու պարտականութիւնից և լու-
ղալու թոյլատրել միայն ֆէլդշերի ներկայու-
թեամբ:—Իր նշան Միտայետի առանձին բա-
րեհաճութեան՝ Գահին և հայրենիքին անձնա-
զօն և եռանդուն ծառայութեան համար նորին
մեծաւորակ Կիւրիկը կայսրի 39 դ. դրագու-
նեան նարմալեց զնդին, որի հիմնարկութեան
200 տարին այժմ լրացաւ, թագաւոր Կայսրը

գնդին նուիրում է մի նոր դրօշակ յօրեկանա-
կան ժապաւնով վրան գրված—1705—1905»:

ԳՈՒՆԶՈՒԼԻՆ, 25 ապրիլի: (Սեփական
թղթակցից): Ընդհանուր դրութեան մէջ փո-
փոխութիւններ չը կան: Այլ թևի դէմ երևաց
թշնամու հեծելազօրի մի խոշոր զօրամաս,
կարելի է թէ դա Եապօնացիների առաջխա-
ղաց շարժման սկիզբն է:

10ԸԴՕՆ, 25 ապրիլի: Երեկոյան լրագիր-
ները, առաւօտվաների նման, անհանգիստ
եղանակով ընդադատում են Անգլիայի և Ձե-
րանսիայի ռուս-եապօնական ընդհարման մէջ
խառնվելու վտանգը, ծովապետ Ռօժեստովնս-
կու գործողութիւնների պատճառով: «Պէլ-
Մէլ Դադէտի» խօսքի համաձայն, դրութիւնը
պահանջում է արագ և վճառական միջոցներ,
որպէս զի անգլիական և Փրանսիական կա-
ռավարութիւնների 15 ամսվայ ջանքերը պա-
տերազմը առանձնացնելու վերաբերմամբ ի
գերեւ չենին: Երկու կառավարութիւններն էլ
չափազանց ցանկանում են խուսափել պատե-
րազմից, բայց ներկայ հանգամանքներում նը-
րանցից ոչ մէկը տէր չէ իր քաղաքի: Այդպիսի
կատառաբարձային ամենից շատ օգտվող պե-
տութիւնը կը լինէր Գերմանիան: Եվստոնի-
ստէր Դադէտը՝ մատնացոյց է անում այն
դժուարութիւնները, որոնք ծագում են բոլոր
կողմերի համար չէզոքութեան օրէնքի անո-

րոշութիւնից և նկատում է, որ Կամբանեան
ծովախորշը պատկանում է մի մասնաւոր ար-
տօնատէրերի և այն ինչ, երբ հարց ծագեց
ռուսական էսկադրայի անգլիական ածուխ
մատակարարելու մասին, մինչև անգամ անգ-
լիական կառավարութիւնն այդ բանին դիմ-
դաբար էր վերաբերվում, յայտնելով, որ ինքը
չէ կարող կօստրօլի ենթարկել մասնաւոր ան-
ձերի գործողութիւնները:

ԱՄՕՑ, 25 ապրիլի: Եապօնացիները հա-
տապեցին խողաղակու կրէյսէրները մի գիծ,
որ տարաւում է Զորքալի շուրջը Մազադ
ովիտանոսում: Ստորջրայի հեռագրաթիւրը կը տ-
րելու լուրի առիթով ասում են, որ Զորքալի-
յում ցէնզորան խիստ է, բայց անկասկած
հաղորդակցութիւն կայ Զորքալի և Պէսկա-
դօրեան կղզիների միջև: Եապօնական յեռա-
կէտներն են Տամուլը և Պէսկադօրեան կղզի-
ները:

ՍԱԶԳՈՆ: Այսօր երկու առևտրական նաւ
կը մեկնեն Պուլօ-Կանդա կղզուց ուսուիլի
պաշարով Ներօգնատուի էսկադրայի համար,
որը յետոյ կը միանայ բալտիկան գլխաւոր
էսկադրայի Ռօժեստովնսկու հրամանատարու-
թեամբ:

ՎԱՊԱՐԱՅՎՈ: Զիւլիական կառավարու-
թիւնը մի քանի ամիս առաջ վճռեց իր մար-
տանաւերը չը ծախել կուղղ կողմերին:

ՊԷՆԱՆԳ: Ենթադրում են, որ բալտիկան
III էսկադրայի մի մասը դեռ մնում է Հուսան-
գի մօտերը: Երէկ երեկոյան «Կալիպսօ» շո-
գենաւը կանգնեցրին Մալակկայի նեղուցում
երկու անգլիական մարտանաւեր, որոնք ըստ
երևութիւն պահապանի պաշտօն էին կատա-
րում:

ՏՕԿԻՕ: Ենթադրում են, որ Ներօգնատու
այսօր կը միանայ Ռօժեստովնսկու հետ անա-
ման ալիերի կամ օսկիւնեան ծոցի մօտերը:
Տօկիօի առևտրական պալատի անդամները
ըննում են Փրանսիայի հետ առևտրական յա-
րաբերութիւններն ընդհատելու հարցը:—Եա-
պօնացիները ենթադրում են, որ այժմ բալ-
տիկան, վրադիվոստոկէն և III բալտիկան
էսկադրաները միասին կազմված են 8 զրա-
նակի նաւերից, 2 զրահանաւ կրէյսէրներից,
9 անգլա հրէյսէրներից և 3 թնդանօթակիր
նաւակներից: Եապօնական ծովային ուժերը
բաղկացած են—14 զրահապատ. մարտանաւե-
րից և 12 ոչ-զրահապատներից: Իսկ ռուսներն
ունեն 10 զրահապատ և 9 ոչ-զրահապատ նա-
ւեր: Եապօնական նաւերը վրնված են 24—25
հատ 12 դիւմանոց, 1 հատ 10 դիւմանոց և
4 հատ 9 դիւմանոց թնդանօթներով: Եապօ-
նական 80 ականանաւեր և հակապանանա-
ւեր ներկայումս պաշտպանում են Հարաւային
Զորքալեան նեղուց

